Երվանդ Նազարեթյան

Հոգեթով մտքի երկնաչափ հույսով

Հոգեթով մտքի երկնաչափ հույսով

Անստվեր ճամփեքով կգամ քեզ այցի,

Եվ անանձնական հույզերով կգամ՝

Կուռ շողերի մեջ նոր լուսաբացի...

Քանզի իմ հոգու թևերով պայծառ

Չեմ գրկել այսպես ուրիշ ոչ ոքի,

Փարվիր ինձ, նաև ինձ քո գիրկը առ

Ներդաշնակ ու մեղմ իմ քնքուշ հոգի...

Իսկ հղացումս աղոթք է հրկեզ,

Որ երկնից ծորա հոգեմերձ շրջան,

Եվ ինձ ձուլվելով լրացում որպես

Քո նուրբ վեհությամբ ինձ շշնջաս՝ ՁԱ՛Ն...

Հոգեթով մտքի երկնաչափ լույսով

Անստվեր ճամփեքով կգամ քեզ այցի,

Եվ անանձնական հույզերով կգամ՝

Կուռ շողերի մեջ նոր լուսաբացի...